ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2019թ. ապրիլի 8-ին ժամը 15:00-ի կայացած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Դ. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Գ. Աթանեսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Ա. Սարգսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Հր. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար***

Մարզի բժշկական հաստատությունների տնօրենները, Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օրակարգում՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին /զեկ. մարզպետի տեղակալ Գ. Աթանեսյան/:
2. Մարզի համայնքներում անցկացված համապետական շաբաթօրյակին վերաբերող ամփոփիչ տվյալներ /զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայան/:
3. Համայնքներում սուբվենցիոն ծրագրերի իրականացման գործընթացի մասին (զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայան):
4. << Իմ քայլը հանուն Արագածոտնի >> միջոցառման հետ կապված կազմակերպչական հարցերի մասին (ՀՀ Արագածոտնի մարզպետ Դ. Գևորգյան):
5. Հայտարարություններ՝

   Դ. Գևորգյան- Ապրիլի 27-ը, որպես քաղաքացու օր նշելու մասին:

   Յու. Ազատյան - գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի, սելավատարների մաքրման աշխատանքների մասին:

   Հ. Ասատրյան- համայնքներում անչափահասների կողմից դրսևորած ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարներից ժամանակին տեղեկատվություն ստանալու մասին:

   Ա. Հակոբյան – Հողերի տրամադրման գործընթացի մասին:

Մարզխորհրդի նիստին հրավիրված էին նաև ՀՀ Արագածոտնի մարզի դատախազ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱԻՆ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ Է. Գալստյանը, ՀՀ Արագածոտնի մարզի զինկոմիսար Ա. Ասատրյանը, որոնք նախքան օրակարգային հարցերի քննարկումը հանդես եկան առանձին ելույթներով:

Զեկուցվեց՝

Վերջին 6 ամիսների ընթացքում ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված իրավախախտումների մասին: Առանձնացվեց հատկապես մարզում բնակարանային գողությունների նկատելի աճը և կանխարգելման միջոցառումների անհրաժեշտությունը, որը հիմնականում կապված է համայնքների մուտքերի և ելքերի

հատվածներում տեսախցիկների և բազմաբնակարան շենքերի մուտքերի փականների տեղադրման անհրաժեշտությամբ: Այդ առումով մեծ է համայնքների ղեկավարների դերը, որոնք կարող են իրենց անմիջական մանակցությամբ և տեխնիկական խնդիրների լուծմամբ ապահովել իրենց համայնքի բնակիչների անվտանգությունը **/Ս. Մնացականյան/:**

Առաջարկվեց՝

Համագործակցությունը ոստիկանության բաժինների հետ ակտիվացնել, այդ ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքների մասին մինչև ապրիլի 20-ը ներկայացնել տեղեկատվություն տեսախցիկների անհրաժեշտ քանակի և տեղադրման վայրերի վերաբերյալ

ՀՀ ԱԻՆ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ Է. Գալստյանը ներկայացրեց նոր նախաձեռնության մասին, որի համաձայն համայնքներում նախատեսվում է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետեր ստեղծել սկզբնական շրջանում Արագածավան և Կոշ համայնքներում,որը կնպաստի գրանցված հրդեհների կամ այլ դեպքերի արագ արձագանքմանը: Հրշեջ-փրկարար կամավորներին հավաքագրելու հարցում ակնկալում են համայնքների ղեկավարների աջակցությունը, իսկ կամավորների հետ վերապատրաստման անհրաժեշտ աշխատանքներ կտարվեն:

Իր խոսքում ՀՀ Արագածոտնի մարզի զինկոմիսար Ա. Ասատրյանը կարևորեց երկրի սահմանների պաշտպանությունն ու մարտունակությունը: Ներկայացվեց, որ զորահավաքին որոշ համայնքների պահեստային ուժերի ընդգրկվածությունը ցածր էր: Քննարկվեց նաև զինապարտի չներկայանալու դեպքում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը: Մարզպետը կարևորեց նմանատիպ զորավարժությունների մասնակցության անհրաժեշտությունը, համարելով, որ այդ միջոցառումներին չներկայանալը հավասար է դասալքության:Նշեց,որ պետք է փոխել վերաբերմունքը պլանով նախատեսված զորահավաքային միջոցառումների նկատմամբ, որից կախված է մեր երկրի ապահովությունն ու ապագան:

1.Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին զեկուցեց մարզպետի տեղակալ Գառնիկ Աթանեսյանը: Ներկայացնելով սեփական եկամուտներ հավաքագրած առավել բարձր և ցածր ցուցանիշներ ունեցող համայնքներին՝ նշեց՝ վիճակագրությունը փաստում է, որ նախորդ տարիների համեմատության արդյունքում արձանագրված է աճ: Եկամուտների հավաքագրմանը խոչընդոտող խնդիրները գրանցագրվել են և ներկայացվել են համապատասխան մարմիններին՝ իրավիճակային կոնկրետ լուծումներ սահմանելու նպատակով: Աշխատանքներն անխափան իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքի ղեկավարից պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել սահմանված ժամկետում՝ ձևաչափին համապատասխան և ճշգրիտ:

2.Ամփոփվեց համապետական շաբաթօրյակի արդյունքները և արձանագրվեց, որ այն աննախադեպ էր իր արդյունավետությամբ: Ներկայացվեց հանրային, պատմամշակութային տարածքների մաքրման աշխատանքների մասին, որում ընդգրկված էր մեծ թվով տեխնիկա, ճանապարհները սպասարկող կառույցներ: Մարզպետի կողմից կարևորվեց նախատեսվող նմանատիպ շաբաթօրյակներում շարքային քաղաքացիների ընդգրկվածության հարցը: Կարևորվեց նաև մարզում մեքենաների թափոնների հավաքման և տեղափոխման խնդիրները, շարունակական ծառատունկ իրականացնելու աշխատանքների անհրաժեշտությունը:

3. Խոսվեց համայնքներին սուբվենցիաների տրամադրման և ծրագրերի իրականացման գործընթացի մասին: Նշվեց,որ դիտողությունների և առաջարկությունների ցանկը ուղարկվել է համայնքներին և առաջարկվել սեղմ ժամկետում շտկումներ անել և ներկայացնել: Ամենափոքր թերությունների առկայության դեպքում աշխատանքները չեն կարող ավարտուն լինել:

4.Մարզպետը **կարևորեց** առաջիկայում կայանալիք «Իմ քայլը հանուն Արագածոտնի» բիզնես-ֆորումի նշանակությունը: Միջոցառմանը ներկա են լինելու հանրապետությունում և արտերկրում բնակվող բազմաթիվ ներդրողներ, գործարարներ: Այս գործում մեծ է համայնքների ղեկավարների դերը, որոնք պարտավոր են տիրապետել իրենց համայնքի ներուժին և ըստ այդմ իմանալ, թե ներդրումային ծրագրերի ինչպիսի իրատեսական հնարավորություններ կան:

Մարզպետը խոսեց մեր երկրում ապիլի 27-ին առաջին անգամ նշվող <<Քաղաքացու օր>> խորհրդանշական տոնի մասին, որը չունի քաղաքական բնույթ, տոնի խորհուրդը պետության մեջ քաղաքացու դերի խրախուսումն է և արժևորումը: Մարզում տոնը նշվելու է մարզկենտրոնում՝ ուղեկցվելով տարբեր միջոցառումներով: Համայնքների ղեկավարների առաջնային խնդիրը լինելու է միջոցառման հրապարակայնության և իրազեկման ապահովումը, միջոցառման շրջանակներում նաև հնարավոր ծառատունկի իրականացումը:

Մարզպետի կողմից խիստ կարևորվեց նաև հողերի օտարման, աճուրդների հրապարակայնության ապահովման գործընթացը, ինչպես նաև ապօրինի շինարարության դեմ տարվող պայքարը: Հնչեցին հայտարարություններ, հարցուպատասխաններ գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի, ոռոգման խնդիրների, հողերի տրամադրման գործընթացի, նպատակային նշանակության փոփոխության կարգի վերաբերյալ:

Մարզպետ՝ **ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ**